

«ԵՐԱԶ ԱՅԳԻ» ԸՆՏԱՆԵԿԱՆ ԺԱՄԱՆՑԱՅԻՆ ԱՅԳՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան Խճուղի 1/8

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

- 1.1. Սույն փաստաթղթի տեքստը համարվում է հրապարակային օֆերտա. այն «Ամառային այգի» ՍՊԸ-ի (այսուհետ՝ **Կազմակերպիչ**) հրապարակային առաջարկն է (այսուհետ նաև՝ **Կանոններ**), որն ուղղված է ցանկացած գործող իրավաբանական, ինչպես նաև գործունակ ֆիզիկական անձի և ներառում է Երազ այգու տարածքից օգտվելու և այդ տարածքում մատուցվող ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություններ) բոլոր էական պայմանները:
- 1.2. «Ամառային այգի» ՍՊԸ-ն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ստեղծված իրավաբանական անձ և գործում է կանոնադրության հիման վրա:
- 1.3. Եթե այլ բան սահմանված չէ սույն Կանոններով, Երազ այգու ողջ տարածքում լինելը և/կամ դրա տարածքում մատուցվող Ծառայություններից օգտվելը (վճարովի և/կամ անհատույց հիմքերով) համարվում է Հաճախորդի կողմից սույն Կանոնների («Ամառային այգի»-ի հրապարակային օֆերտայի) ընդունում: Օֆերտայի ընդունումը նշանակում է Հաճախորդի կողմից սույն Կանոնների բոլոր պայմանների լիակատար և անվերապահ ընդունում՝ առանց որևէ բացառության և/կամ սահմանափակումների և համարժեք է գրավոր պայմանագրի կնքմանը: Ընդունելով սույն Կանոնները՝ Հաճախորդը տեղեկացվում է, որ հետագայում Կողմերը չեն նախատեսում կնքել և միմյանց տրամադրել ծառայությունների մատուցման պայմանագիրը և դրա հավելվածները թղթային տարբերակով:
- 1.4. Ստորև նշված Կանոններն ընդունելու դեպքում իրավաբանական կամ ֆիզիկական անձը (այդ թվում՝ ի շահ անչափահաս երեխաների գործող), որն ընդունում է սույն օֆերտան, դառնում է Կազմակերպիչի հաճախորդը (այսուհետ՝ Հաճախորդ), (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ օֆերտայի ընդունումը հավասարազոր է օֆերտայով սահմանված պայմաններով պայմանագրի կնքմանը), իսկ Կազմակերպիչը և Հաճախորդը միասին դառնում են հրապարակային պայմանագրի կողմեր: Վերոնշյալի հետ կապված՝ Հաճախորդը պետք է հաշվի առնի, որ եթե վերջինս համաձայն չէ սույն Կանոնների որևէ կետի հետ, Կազմակերպիչը վերջինիս առաջարկում է Ծառայություններից չօգտվել:
- 1.5. Հաճախորդ չեն կարող հանդիսանալ.
 - 1.5.1. ալկոհոլի, թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ազդեցության տակ գտնվող անձինք,
 - 1.5.2. անձինք, որոնց վարքագիծը կարող է վտանգ ներկայացնել այգու անվտանգության և/կամ վիճակի համար կամ հակասում է վարքագծի հանրային նորմերին,
- 1.6. Սույն Կանոնները տեղադրվում են Երազ այգու տարածքում՝ հանրամատչելի վայրերում:
- 1.7. Սույն Օֆերտան գործում է անսահմանափակ ժամկետով, սակայն Ծառայությունների ժամկետի ավարտից և/կամ այգու տարածք յուրաքանչյուր մուտքից հետո Հաճախորդը պետք է ամեն անգամ ընդունի Կանոնները՝ համաձայն սույն Փաստաթղթի:

1.8. Կազմակերպիչն իրավունք ունի հրաժարվել Ծառայություններ տրամադրել ցանկացած Հաճախորդի, որը չի համապատասխանում Կանոններին և/կամ խախտում է սույն Կանոնների և դրանց հավելվածների պահանջները՝ առանց որևէ լրացուցիչ բացատրության և առանց Ծառայության համար վճարված գումարը (այդպիսին վճարված լինելու դեպքում) վերադարձնելու:

2. ԿԱՆՈՆՆԵՐ

2.1 Կազմակերպիչն իրավունք ունի.

- 2.1.1 պահանջել, որ Հաճախորդը լիովին ընդունի Կանոնները և հրաժարվել Ծառայությունների մատուցումից՝ Հաճախորդի կողմից դրանց չընդունվելու դեպքում,
- 2.1.2 պահանջել, որ այգու տարածքում իրականացվող ցանկացած առևտրային գործունեություն և/կամ հանրային միջոցառում (այսուհետ նաև՝ **Միջոցառում**), այդ թվում՝ վաճառքներ, ակցիաներ, ելույթներ կամ հավաքներ, իրականացվի միայն կազմակերպչից նախապես ստացված գրավոր համաձայնությամբ,
- 2.1.3 պահանջել խմբային հավաքները կազմակերպել այնպես, որ դրանք չխանգարեն մյուս այցելուների հանգստին և անվտանգությանը,
- 2.1.4 պահանջել օգտագործել սկուտերները և այլ երկանիվները միայն հատուկ նշանակված տարածքներում՝ հետևելով ուղեցույց-նշաններին,
- 2.1.5 պահանջել, որ այգու տարածքում իրականացվող ցանկացած առևտրային գործունեություն համապատասխանի Կազմակերպչի սկզբունքներին: Գործունեության նման տեսակներ կարող են լինել՝
 - ա. սննդի և խմիչքների վաճառքը,
 - բ. ապրանքների վաճառքը,
 - գ. ժամանցային ծառայությունների մատուցումը
 - դ. հովանավորչական ակցիաները
 - ե. և այլն,
- 2.1.6 արգելել այգու տարածքում ցանկացած գործունեություն, որը Կազմակերպչի կողմից համարվում է անօրինական, վտանգավոր, վիրավորական, անհարկի և/կամ անհամապատասխան,
- 2.1.7 պահանջել, որ այգու տարածքում իրականացվող ցանկացած գործողություն իրականացվի՝ հաշվի առնելով դրա ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, չաղտոտել և/կամ չվնասել բնական միջավայրը,
- 2.1.8 պահանջել պահպանել անվտանգության բոլոր կանոնները, աղմուկի սահմանափակումները և ամբոխի վերահսկման միջոցառումները,
- 2.1.9 պահանջել նախապես տրամադրել պետական և/կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրված բոլոր անհրաժեշտ թույլտվությունները կամ լիցենզիաները և/կամ այլ անհրաժեշտ փաստաթղթերը և/կամ դրանց պատճենները,
- 2.1.10 անհրաժեշտության դեպքում պահանջել լրացուցիչ անվտանգության միջոցներ ձեռնարկել, որոնց հետ կապված ծախսերը կրում է Հաճախորդը,
- 2.1.11 արգելել մեծ շների հետ մուտքը այգու տարածք,
- 2.1.12 պահանջել, որպեսզի այգու տարածքում իրականացվող ցանկացած գովազդային գործողություն նախապես հաստատվի Կազմակերպչի կողմից, և արգելել չհաստատված թռուցիկների, պաստառների կամ այլ գովազդային նյութերի տարածումը: Գովազդային նյութերը (դրանց ցուցադրումը և/կամ որևէ այլ եղանակով

տարածումը Կազմակերպչի կողմից հաստատված լինելու դեպքում) չպետք է պարունակեն հակաիրավական, վիրավորական և/կամ Կազմակերպչի կողմից չթույլատևված տարրեր,

- 2.1.13 պահանջել, որպեսզի այգու տարածքում նկարահանում նախաձեռնելու դեպքում նախապես ստանալ Կազմակերպչի թույլտվությունը և վճարել Հավելված 1-ով նախատեսված սակագներին համապատասխան արժեքը: Թույլտվություն ստանալու գրավոր դիմումը պետք է ուղարկվի հետևյալ էլ. փոստի հասցեին info@yerazpark.am, նշելով նկարահանումների ամսաթիվը և ժամը, նկարահանման բովանդակությունը և ստացված նյութի նախատեսվող օգտագործման նպատակը (օրինակ՝ թվային կամ ոչ թվային հրապարակման համար):
- 2.1.14 պահանջել ընդունել ծառայությունները և/կամ իրականացնել Միջոցառումները նախապես համաձայնեցված ամսաթվին և ժամին, պահանջել, որ Հաճախորդը խստորեն պահպանի Կազմակերպչի և անձնակազմի պահանջները, սույն Կանոնները և Կազմակերպչի կայքում տեղադրված այլ կանոնները,
- 2.1.15 հրաժարվել Հաճախորդին Ծառայությունները մատուցելուց սույն Կանոնների 1.9 կետում նշված դեպքերում,
- 2.1.16 հրաժարվել Ծառայություններ տրամադրել ցանկացած Հաճախորդի, որը խախտում է սույն Կանոնների և դրանց հավելվածների պահանջները՝ առանց որևէ լրացուցիչ բացատրության և առանց Ծառայության համար վճարված գումարը վերադարձնելու:
- 2.1.17 միակողմանիորեն հաստատել և փոփոխել սույն Կանոնները, նկարահանումների սակագները և այլ կանոններ՝ տեղեկացնելով Հաճախորդին այդ մասին համապատասխան տեղեկատվությունը տեղեկատվական վահանակների վրա և/կամ Կազմակերպչի սոցիալական էջում տեղադրելու միջոցով,

2.2 Հաճախորդը պարտավոր է.

- 2.2.2 ամբողջությամբ ընդունել և պահպանել սույն Կանոնները,
- 2.2.3 ցուցաբերել հարգալից և քաղաքավարի վարքագիծ
- 2.2.4 խմբային հավաքները կազմակերպել այնպես, որ դրանք չխանգարեն մյուս այցելուների հանգստին և անվտանգությանը,
- 2.2.5 օգտագործել սկուտերները և այլ երկանիվները միայն հատուկ նշանակված տարածքներում՝ հետևելով նշաններին,
- 2.2.6 այգու տարածքում իրականացվող ցանկացած առևտրային գործունեություն և/կամ հանրային միջոցառում (այսուհետ նաև՝ Միջոցառում), այդ թվում՝ վաճառքներ, ակցիաներ, ելույթներ կամ հավաքներ, նախապես գրավոր ընթացակարգով համաձայնեցնել Կազմակերպչի հետ:
- 2.2.7 այգու տարածքում իրականացվող ցանկացած առևտրային գործունեություն համապատասխանեցնել այգու սկզբունքներին և կոնցեպտին,
- 2.2.8 այգու տարածքում իրականացվող ցանկացած գործողություն իրականացնել՝ հաշվի առնելով դրա ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, չաղտոտել կամ չվնասել բնական միջավայրը,
- 2.2.9 պահպանել անվտանգության բոլոր կանոնները, աղմուկի սահմանափակումները և ամբոխի վերահսկման միջոցառումները,
- 2.2.10 նախապես տրամադրել պետական և/կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրված բոլոր անհրաժեշտ թույլտվությունները կամ լիցենզիաները և/կամ այլ անհրաժեշտ փաստաթղթերը և/կամ դրանց պատճենները,
- 2.2.11 անհրաժեշտության դեպքում, Կազմակերպչի պահանջի համաձայն, լրացուցիչ անվտանգության միջոցներ ձեռնարկել և կրել դրանց հետ կապված ծախսերը,

- 2.2.12 այգու տարածքում իրականացվող ցանկացած գովազդային գործողություն նախապես ներկայացնել Կազմակերպչի հաստատմանը, և արգելել չհաստատված թռուցիկների, պաստառների կամ այլ գովազդային նյութերի տարածումը: Գովազդային նյութերը չպետք է պարունակեն հակաիրավական, վիրավորական և/կամ Կազմակերպչի կողմից չթույլատրված տարրեր:
- 2.2.13 այգու տարածքում ցանկացած տեսակի ֆոտո, վիդեո նկարահանում նախաձեռնելու դեպքում նախապես ստանալ Կազմակերպչի թույլտվությունը և վճարել Հավելված 1-ով նախատեսված սակագների համապատասխան արժեքը: Թույլտվություն ստանալու գրավոր դիմումը պետք է ուղարկվի էլ. փոստի հասցեին info@yerazpark.am, նշելով նկարահանումների ամսաթիվը և ժամը, նկարահանման բովանդակությունը և ստացված նյութի նախատեսվող օգտագործման նպատակը (օրինակ՝ թվային կամ ոչ թվային հրապարակման համար),
- 2.2.14 ընդունել ծառայությունները և/կամ իրականացնել Միջոցառումները նախապես համաձայնեցված ամսաթվին և ժամին՝ խստորեն պահպանել Կազմակերպչի և անձնակազմի պահանջները, սույն Կանոնները,
- 2.2.15 խստորեն պահպանել Կազմակերպչի և անձնակազմի պահանջները, սույն Կանոնները,
- 2.2.16 վթարային իրավիճակներում անհապաղ դիմել զբոսայգու անձնակազմին,

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 3.1. Սույն Կանոններով սահմանված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն Կանոնները,
- 3.2. Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից Կազմակերպչի պահանջներին ու կանոններին, սույն Կանոններին և վերաբերելի Օրենսդրությանը չտիրապետելու կամ դրանք չկատարելու համար,
- 3.3. Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում Հաճախորդների գույքի, արժեքավոր իրերի, փաստաթղթերի և դրամական միջոցների, Ծառայությունների արժեքի վճարման փաստը հաստատող վճարային փաստաթղթերի (վճարման անդորրագրերի) պահպանման համար,
- 3.4. Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի մեղքով կամ երրորդ անձանց գործողությունների արդյունքում Հաճախորդին և/կամ նրա գույքին պատճառված վնասի կամ կորստի համար:
- 3.5. Գտնվելով այգու տարածքում և/կամ օգտվելով Ծառայություններից՝ Հաճախորդը ընդունում է սույն Կանոնները և իրավունք չունի Կազմակերպչից պահանջել որևէ փոխհատուցում Հաճախորդին պատճառված բարոյական, նյութական վնասի կամ Հաճախորդի առողջությանը պատճառված վնասի դիմաց՝ բացառությամբ այն դեպքերի, որոնք ուղղակիորեն սահմանված են գործող օրենսդրությամբ,
- 3.6. Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում իր կամքից անկախ պատճառներով Հաճախորդին սպասարկելու անհնարինության համար,
- 3.7. Կազմակերպիչը ոչ մի դեպքում որևէ պատասխանատվություն չի կրում ներքոգրյալի համար.
- ցանկացած գործողություն և/կամ անգործություն, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանդիսանում է որևէ երրորդ անձի գործողությունների/անգործության արդյունք,

- Հաճախորդի և/կամ երրորդ անձանց որևէ անուղղակի կորուստ և/կամ բաց թողնված օգուտ՝ անկախ այն հանգամանքից՝ Կազմակերպիչը կարող էր կանխատեսել նման կորուստների հավանականությունը, թե ոչ,
- Հաճախորդի կողմից Կազմակերպիչից ստացված տեղեկատվության օգտագործման (օգտագործման անհնարինությունը) և նման օգտագործման (օգտագործման անհնարինության) հետևանքների:

Հավելված 1

Ծառայություն	Արժեք
Առևտրային նկարահանումների արժեք(մեկ ժամ)	100.000 ՀՀ դրամ